

Խաղի Կանոններ 2020/21

փոփոխություններ և պարզաբանումներ

Կանոն 1 – Խաղադաշտը

10. Դարպասներ

Փոփոխված տեքստ

(...)

Դարպասասյունները և հեծանը պետք է պատրաստված լինեն թույլատրված նյութից: Դրանք ձևով պետք է լինեն քառակուսի, ուղղանկյուն, կլոր, ~~կամ~~ էլիպսաձև կամ այս ձևերի համդրությամբ և չպետք է վտանգավոր լինեն:

Բացատրություն

Դարպասասյունները և հեծանը կարող են լինել չորս հիմնական ձևերի համադրությամբ:

Կանոն 2 – Գնդակը

2. Ոչ պիտանի գնդակի փոխարինումը

Փոփոխված տեքստ

Եթե գնդակը դառնում է ոչ պիտանի, ապա՝ պետք է.

- խաղը կանգնեցվի և
- վերսկսվի ~~փոխարինված գնդակի վիճաբանական նետումով այնտեղից, որտեղ հիմնական գնդակը դարձել է ոչ պիտանի~~

Բացատրություն

Ձևակերպումը փոփոխվել է, որպեսզի համահունչ լինի Կանոն 8-ի հետ:

Կանոն 4 – Խաղացողների հանդերձանքը

4. Այլ հանդերձանք - Էֆեկտիվության վերահսկման Էլեկտրոնային համակարգեր (EPTS)

Փոփոխված տեքստ

Եթե ՖԻՖԱ-ի, կոնֆեդերացիայի կամ ազգային ֆուտբոլային ասոցիացիայի հովանու ներքո կազմակերպվող պաշտոնական մրցաշարերի խաղերի ժամանակ, օգտագործվում է կրելի տեխնոլոգիա (WT) որպես Էֆեկտիվության վերահսկման Էլեկտրոնային համակարգերի (EPTS) մաս, ապա մրցաշարի կազմակերպիչը պետք է համոզվի, որ խաղացողների հանդերձանքին ամրացված տեխնոլոգիան վտանգավոր չէ և ~~այն պետք է ունենա հետևյալ տարբերանշանը~~ պետք է համապատասխանի հետևյալ ստանդարտներից որևէ մեկին. IMS (International Match Standard) կամ FIFA Quality:



(այս նկարը պետք է ջնջվի)

~~Այս տարբերանշանը վկայում է, որ այն պաշտոնապես ստուգվել և համապատասխանում է ՖԻՖԱ-ի կողմից սահմանված Միջազգային Խաղի Ստանդարտի (International Match Standard) անվտանգության նվազագույն պահանջներին և հաստատված են IFAB-ի կողմից: Ստուգումներն իրականացնող կազմակերպությունները հաստատվում են ՖԻՖԱ-ի կողմից:~~

~~Եթե օգտագործվում են Էֆեկտիվության վերահսկման Էլեկտրոնային համակարգեր (EPTS) (ազգային ֆուտբոլային ասոցիացիայի/մրցումների կազմակերպիչ համաձայնությամբ) տրամադրվում է խաղի կամ մրցումների կազմակերպիչի կողմից, ապա դա խաղի կամ մրցումների կազմակերպիչի պարտականությունն է պետք է համոզվել, որ պաշտոնական մրցաշարի խաղերի ընթացքում EPTS-ից տեխնիկական գոտի փոխանցվող ինֆորմացիան և տվյալները հուսալի են և ճշգրիտ:~~

(...)

Չետևյալ տարբերանշանը մատնանշում է, որ EPTS-ը (կրելի լամ օպտիկական) ~~սարք/ համակարգ~~ պաշտոնապես ստուգվել է և իր հուսալիությամբ և ճշգրտությամբ համապատասխանում է ֆուտբոլի հիմնական տվյալների պահանջներին:



Բացատրություն

Ձևակերպումը փոփոխվել է:

Կանոն 10 – Խաղի ելքի որոշումը

3. 11 մետրանոց հարվածաշար

Փոփոխված տեքստ

11 մետրանոց հարվածաշարը կատարվում է խաղից հետո, եթե այլ բան նախատեսված չէ: Պետք է գործեն համապատասխան «Խաղի Կանոններ»-ը: Խաղացողն, ով հեռացվել է խաղի ընթացքում, չպետք է մասնակցի հարվածաշարին: Խաղի ընթացքում տրված բանավոր զգուշացումները և զգուշացումների չպետք է տեղափոխվեն 11 մետրանոց հարվածաշար:

Բացատրություն

Խաղի ընթացքում (ներառյալ լրացուցիչ ժամանակը) տրված զգուշացումները (դեղին քարտեր) և բանավոր զգուշացումները չպետք է տեղափոխվեն 11 մետրանոց հարվածաշար, քանի որ հարվածաշարը խաղի մաս չէ: Խաղացողն, ով դեղին քարտ է ստանում նախ խաղի այնուհետև հարվածաշարի ընթացքում չպետք է հեռացվի (հարվածաշարի ընթացքում կամ կարգապահական նկատառումներով):

3. 11 մետրանոց հարվածաշար

Փոփոխված տեքստ

Հարվածաշարի ընթացքում

(...)

- Եթե դարպասապահը խախտում է կատարում և դրա արդյունքում հարվածը պետք է կրկնվի, ապա դարպասապահը պետք է զգուշացվի դարպասապահը պետք է բանավոր զգուշացվի առաջին խախտման համար և զգուշացվի հետագա ցանկացած խախտման (խախտումների) համար

(...)

- Եթե և դարպասապահը, և հարվածողը միաժամանակ խախտում են կատարում.
 - ~~Եթե հարվածը շեղ է կատարվում կամ հետ է մղվում, ապա հարվածը պետք է կրկնվի և երկու խաղացողներն էլ պետք է զգուշացվեն~~
 - Եթե գոլ է խփվում, ապա այն չպետք է արձանագրվի ապա, հարվածը պետք է արանցվի որպես շեղ(գոլ չէ) և հարվածողը պետք է զգուշացվի

Բացատրություն

- Հիմնականում դարպասապահը ժամանակից շուտ է առաջ շարժվում հարվածի կատարման պահի սխալ կանխատեսման պատճառով: Այսպիսով առաջին խախտման համար դարպասապահը պետք է բանավոր զգուշացվի, բայց հարվածը կրկնելիս և/ կամ ցանկացած հաջորդ հարվածի ժամանակ կատարված ցանկացած խախտման (խախտումների) համար պետք է զգուշացվի
- Երբ (հազվադեպ) դարպասապահը և հարվածողը ճշգրիտ միաժամանակ են խախտում են կատարում, ապա պետք է պատժվի հարվածողը, քանի որ խաբքի կիրառումը անօրինակն է, որի արդյունքում դարպասապահը շուտ է առաջ շարժվում

Կանոն 11 – Խաղից դուրս

2. «Խաղից դուրս» -ի խախտում

Փոփոխված տեքստ

Չի համարվում ստանալ առավելություն, երբ «խաղից դուրս» դիրքում գտնվող խաղացողը, գնդակ է ստանում մրցակցից, ով միտումնավոր գնդակ է խաղացել՝ ~~(բացառությամբ, երբ որևէ մրցակցից միտումնավոր հետ մղել այն)~~ Ներառյալ միտումնավոր ձեռքով խաղալը, բացառությամբ, եթե դա ցանկացած մրցակցի կողմից կատարված միտումնավոր հետ մղում էր:

Բացատրություն

Հստակեցվում է, որ «խաղից դուրս»-ը որոշելիս պաշտպանի կողմից միտումնավոր ձեռքով խաղը դիտվում է որպես «միտումնավոր խաղ»: Քանի որ «օրինական» միտումնավոր գնդակ խաղալուց հետո (օրինակ, ոտքով կամ գլխով հարված), խաղից դուրս դիրքում գտնվող խաղացողը չի պատժվում խաղից դուրս դիրքում գտնվելու համար, ապա «անօրինական» խաղի դեպքում նույնպես խաղից դուրս դիրքում գտնվող խաղացողը չպետք է պատժվի խաղից դուրս դիրքում գտնվելու համար :

Կանոն 12 - Կանոնների խախտումներ և ոչ պատշաճ վարքագիծ

1. Տուգանային հարված - Ձեռքով գնդակ խաղալ

Նոր տեքստ և նկար

Ձեռքով խաղի խախտումը որոշելիս, ձեռքի/թևի վերին սահմանը գտնվում է թևատակի ներքևի սահմանի ուղղությամբ:

Բացատրություն

Ձեռքով խաղը որոշելիս, ձեռքը/թևը սկսվում է թևատակի ներքևի մասից, ինչպես ցուցադրված է վերջին էջի նկարում:

1. Տուգանային հարված - Ձեռքով գնդակ խաղալ

Փոփոխված տեքստ

Խախտում է, երբ խաղացողը.

- միտումնավոր դիպչում է գնդակին ձեռքով/թևով, ներառյալ ձեռքի/թևի շարժումը դեպի գնդակը
- ձեռքով/թևով անմիջապես գրավում է մրցակցի դարպասը, նույնիսկ, եթե դա կատարվել է պատահականորեն՝ ներառյալ դարպասապահի կողմից
- ~~տիրապետում/վերահսկում է գնդակն իր կամ թիմակցի ձեռքին/թևին նույնիսկ պատահաբար դիպչելուց հետո անմիջապես.~~
 - գրավում է մրցակցի դարպասը
 - ստեղծում է գոլ խփելու հնարավորություն

Սովորաբար խախտում է, երբ խաղացողը.

- ձեռքով/թևով դիպչում է գնդակին, երբ.
 - (...)

Բացառությամբ վերը նշված խախտումների, ~~սովորաբար~~ խախտում չէ, երբ գնդակը դիպչում է խաղացողի ձեռքին/թևին.
(...)

Բացատրություն

Հստակեցվում է, որ.

- Ձեռքով խաղի խախտում է, եթե հարձակվողը ձեռքով/թևով պատահաբար դիպչում է գնդակին, որից հետո գնդակը գնում է մեկ այլ հարձակվողի մոտ և հարձակվող թիմն անմիջապես գոլ է խփում
- խախտում չէ, եթե պատահական ձեռքով խաղից հետո գնդակը որոշակի տարածություն է անցնում (փոխանցում կամ գնդակով անցում) և/կամ մի քանի փոխանցում է կատարվում մինչև գոլը կամ գոլային հնարավորությունը:

1. Տուգանային հարված - Ձեռքով գնդակ խաղալ

Փոփոխված տեքստ

Տուգանային հրապարակից դուրս ձեռքով գնդակ խաղալու համար դարպասապահի վրա տարածվում են նույն սահմանափակումները, ինչ որ ցանկացած այլ խաղացողի: Եթե դարպասապահը ձեռքով գնդակ է խաղում սեփական տուգանային հրապարակում, երբ դա չի թույլատրվում, ապա պետք է նշանակվի ազատ հարված, բայց չպետք է կիրառվի կարգապահական պատժամիջոց: Այնուամենայնիվ, եթե խախտումը խաղի վերսկսումից հետո երկրորդ անգամ գնդակին դիպչելն է (ձեռքով/թևով կամ մարմնի այլ մասով)՝ մինչ մեկ այլ խաղացող կդիպչեր գնդակին, ապա դարպասապահը պետք է պատժվի, եթե այդ խախտումով խափանում է հեռանկարային գրոհը կամ գրկում է մրցակցին կամ մրցակից թիմին գոլից կամ գոլ խփելու ակնհայտ հնարավորությունից:

Բացատրություն

Եթե խաղի վերսկսումից հետո դարպասապահը երկրորդ անգամ դիպչում է գնդակին (մինչ մեկ այլ խաղացող կդիպչի դրան) և խափանում է հեռանկարային գրոհ կամ մրցակցին գրկում է գոլից կամ ակնհայտ գոլային հնարավորությունից, ապա դարպասապահը պետք զգուշացվի (ԴԲ) կամ հեռացվի (ԿԲ): Սա կիրառվում է նույնիսկ եթե երկրորդ հպումը կատարվել է ձեռքով/թևով, քանի որ խախտումը ոչ թե «ձեռքով խաղ»-ն է այլ երկրորդ անգամ «անօրինականորեն» գնդակ խաղալը:

3. Կարգապահական պատժամիջոց - Քարտ ցույց տալու համար՝ խաղի վերսկսման ձգձգում

Փոփոխված տեքստ

Եթե մրցավարը որոշել է զգուշացնել կամ հեռացնել խաղացողին, ապա խաղը չպետք է վերսկսվի, մինչև պատժամիջոցը կիրառվի, բացառությամբ, երբ ոչ մեղավոր թիմը կատարում է տուգանային/ազատ հարվածի արագ խաղարկում՝ ունենալով գոլ խփելու ակնհայտ հնարավորություն և մրցավարը չի սկսել կարգապահական պատժամիջոցը կիրառելու ընթացակարգը : Այդ դեպքում պատժամիջոցը պետք է կիրառվի հաջորդ խաղադաշարի ժամանակ: Եթե խախտումը մրցակցին գոլ խփելու ակնհայտ հնարավորությունից զրկելն էր, ապա խաղացողը պետք է զգուշացվի: Եթե խախտումը հեռանկարային գրոհին միջամտելը կամ դրա խափանումն էր, ապա խաղացողը չպետք է զգուշացվի:

Բացատրություն

Եթե ակնհայտ գոլ խփելու հնարավորությունից զրկելու խախտումից հետո մրցավարը թույլատրում է տուգանային/ազատ հարվածով խաղի «արագ» վերսկսում, ապա (հետաձգված) ԿԲ-ը փոխարինվում է ԴԲ-ով: Հետևաբար, եթե հեռանկարային գրոհին միջամտելու կամ դրա խափանման խախտումից հետո մրցավարը թույլատրում է տուգանային/ազատ հարվածով խաղի «արագ» վերսկսում, ապա (հետաձգված) ԴԲ-ը չպետք է կիրառվի:

3. Կարգապահական պատժամիջոց - Առավելություն

Փոփոխված տեքստ

Եթե մրցավարը կիրառել է առավելություն տալու սկզբունքը այն խախտման համար, որը նախատեսում է զգուշացում / հեռացում, ապա այս զգուշացումը / հեռացումը պետք է տրվի մոտակա խաղադաշտին: բացառությամբ, Այնուամենայնիվ, եթե խախտումը մրցակցին ակնհայտ գուլային հնարավորությունից զրկել էր, երբ ապա խախտում կատարած խաղացողը պետք է զգուշացվի ոչ սպորտային վարքագծի համար: Եթե խախտումը հեռանկարային գրոհին միջամտելը կամ դրա խափանումն էր, ապա խաղացողը չպետք է զգուշացվի:

Բացատրություն

Եթե ակնհայտ գուլ խփելու հնարավորությունից զրկելու խախտումից հետո մրցավարը կիրառում է առավելություն տալու սկզբունքը, ապա ԿԲ-ը փոխարինվում է ԴԲ-ով: Յետևաբար, եթե հեռանկարային գրոհին միջամտելու կամ դրա խափանման խախտումից հետո մրցավարը կիրառում է առավելություն տալու սկզբունքը, ապա ԴԲ-ը չպետք է կիրառվի:

3. Կարգապահական պատժամիջոց - Զգուշացման արժանի խախտումներ

Փոփոխված տեքստ

Խաղացողը զգուշացվում է, եթե.

(...)

- չի պահպանում սահմանված հեռավորությունը «Վիճաբանական գնդակի» նետմամբ, անկյունային, տուգանային/ազատ հարվածով կամ կողագծից նետմամբ խաղը վերսկսելիս

Բացատրություն

«Վիճաբանական գնդակի» նետման ժամանակ սահմանված հեռավորության չպահպանումը ներառվել է զգուշացման արժանի խախտումներում:

3. Կարգապահական պատժամիջոց - Զգուշացումներ ոչ սպորտային վարքագծի համար

Փոփոխված տեքստ

Կան տարբեր հանգամանքներ, երբ խաղացողը պետք է զգուշացվի ոչ սպորտային վարքագծի համար, ներառյալ, եթե խաղացողը.

(...)

- կատարում է ցանկացած այլ խախտում, որով խանգարում է զարգացնել կամ խափանում է մրցակցի հեռանկարային գրոհը, բացառությամբ, երբ մրցավարը նշանակում է 11 մետրանոց հարված այն խախտման համար, որը կատարվել է գնդակ խաղալու փորձ կատարելիս

Բացատրություն

Հեռանկարային գրոհը կարող է խափանվել այնպիսի խախտումով, որը կոպիտ խաղ չէ (օրինակ. խաղի վերսկսումից հետո «անօրինականորեն») երկրորդ անգամ գնդակ խաղալը): Այսպիսով ձևակերպումն իր մեջ ներառում է ձեռքով խաղից բացի մնացած բոլոր խախտումները, որը սահմանվում է նախորդ կետում:

Կանոն 14 – 11 մետրանոց հարված

2. Խախտումներ և պատժամիջոցներ

Փոփոխված տեքստ

(...)

Եթե մինչ գնդակը կմտնի խաղի մեջ, կատարվի հետևյալ իրադրություններից որևէ մեկը.

(...)

- դարպասապահը խախտում է կատարում.
 - եթե գնդակը գոլ է մտնում, ապա գոլը պետք է արձանագրվի
 - եթե գնդակը դարպասից շեղ է ընթանում, կամ անդրադարձվում է հեծանից կամ դարպասասյուն(եր)ից, ապա հարվածը պետք է կրկնվի միայն, եթե դարպասապահի կատարած խախտումը ակնհայտորեն ազդել է հարվածողի վրա
 - Եթե դարպասապահն է կանխել գնդակի մուտքը դարպաս, ապա հարվածը պետք է կրկնվի

Եթե դարպասապահի խախտման արդյունքում հարվածը պետք է կրկնվի, ապա խաղի ընթացքում կատարված առաջին խախտման համար դարպասապահը պետք է բանավոր զգուշացվի, իսկ խաղի ընթացքում կատարված հետագա ցանկացած խախտման (խախտումների) համար պետք է զգուշացվի
- ~~դարպասապահը կամ նրա~~ դարպասապահի թիմակիցը խախտում է կատարում.
 - եթե գնդակը գոլ է մտնում, ապա գոլը պետք է արձանագրվի
 - եթե գնդակը գոլ չի մտնում, ապա հարվածը պետք է կրկնվի: ~~Եթե խախտումը կատարել է դարպասապահը, ապա նա պետք է զգուշացվի~~
- երկու թիմերի խաղացողներն են խախտում կատարում ~~«խաղի կանոնները»~~, ապա հարվածը պետք է կրկնվի, բացառությամբ, երբ խաղացողը կատարել է ավելի լուրջ խախտում (օրինակ՝ անօրինական խաբբ):
- ~~Եթե~~ և դարպասապահը, և հարվածողը միաժամանակ խախտում են կատարում.
 - ~~Եթե հարվածը շեղ էր կամ հետ է մղվել, ապա հարվածը պետք է կրկնվի և երկու խաղացողներն էլ պետք է զգուշացվեն~~
 - ~~Եթե գոլ է խփվել, ապա գոլը չպետք է արձանագրվի, հարվածողը պետք է զգուշացվի և խաղը պետք է վերսկսվի ազատ հարվածով՝ պաշտպանվող թիմի օգտին~~

Բացատրություն

- Հաստատվում է (ինչպես սահմանված է ԻՖԱԲ-ի թիվ 17 շրջաբերականում՝ Օգոստոս 2019 թ), որ եթե 11 մետրանոց հարվածի կատարման ժամանակ դարպասապահը խախտում է կատարում և գնդակը դարպասից շեղ է ընթանում կամ անդրադարձվում է հեծանից կամ դարպասայուն(եր)ից (այսինքն՝ դարպասապահը հետ չի մղել կամ չի որսացել գնդակը), ապա դարպասապահը չպետք է պատժվի, բացառությամբ այն դեպքերի, երբ դարպասապահի գործողություն(ներ)ը ակնհայտորեն ազդել է հարվածողի վրա
- Հիմնականում դարպասապահը ժամանակից շուտ է առաջ շարժվում հարվածի կատարման պահի սխալ կանխատեսման պատճառով: Այսպիսով առաջին խախտման համար դարպասապահը չպետք է զգուշացվի, բայց պետք է զգուշացվի տվյալ հարվածի և/ կամ ցանկացած հետագա հարվածի ժամանակ կատարված ցանկացած այլ խախտման (խախտումների) համար
- Եթե հարվածողը և դարպասապահը ճշգրիտ միաժամանակ են խախտում կատարում (հազվադեպ հանդիպող իրավիճակ) և քանի որ սովորաբար դարպասապահի խախտումը հարվածողի «անորինական» խաբքի կիրառման հետևանք է, ապա նմանատիպ դեպքերում պետք է պատժվի հարվածողը

3. Ամփոփիչ աղյուսակ

Փոփոխված աղյուսակ

	11 մետրանոց հարված	
	Գոլ է	Գոլ չէ
Խախտում հարձակվողի կողմից	Հարվածը պետք է կրկնվի	Ազատ հարված
Խախտում պաշտպանի կողմից	Գոլ	Հարվածը պետք է կրկնվի
<u>Խախտում պաշտպանի և հարձակվողի կողմից</u>	<u>Հարվածը պետք է կրկնվի</u>	<u>Հարվածը պետք է կրկնվի</u>
Խախտում դարպասապահի կողմից	Գոլ	<u>Հետ չի մղվել, հարվածը չպետք է կրկնվի (բացառությամբ, եթե դարպասապահը ազդել է հարվածողի վրա)</u> <u>Հետ է մղվել, հարվածը պետք է կրկնվի և դարպասապահը պետք բանավոր զգուշացվի և պետք է զգուշացվի հետագա գանկացած այլ խախտման (խախտումների) համար</u>
Դարպասապահի և հարվածողի կողմից կատարված միաժամանակ խախտում	<u>Ազատ հարված և հարվածողը պետք է զգուշացվի</u>	<u>Ազատ հարված և հարվածողը պետք է զգուշացվի</u>
Գնդակը հետ է խփվել	Ազատ հարված	Ազատ հարված
Անօրինական խաբբի կիրառում	Ազատ հարված և հարվածողը պետք է զգուշացվի	Ազատ հարված և հարվածողը պետք է զգուշացվի
Սխալ հարվածող	Ազատ հարված և այդ հարվածողը պետք է զգուշացվի	Ազատ հարված և այդ հարվածողը պետք է զգուշացվի

Ձեռքով խառի նկար

